

**Տարեկան գինը 10 բուլլի. կէս տարվան 6 բուլլ.
Առանձին հաժարները 5 կօպէկով.**

ԹԻՖլիսում գրվում են միմիայն խաբարդաստան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
 Կամ Tiflis, Rédaction «Mschak».
 Տ է Լ Ք Օ Ն № 253.

Նմազարութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից)։

Յալտաբարոլթիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
ՏԷԼԵՖՈՆ ԱՅ 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԳԵՐԵԳԻՆ ՄԵԼՐԱԲԵԱՆՑԻ

Մանգլիսի հայոց եկեղեցու ծխատեղ Թաղուր քահանայ Մեհրաբեանը իր ընտանիքի հետ միասին ցաւօք արտի լայտնուով է ծանօթներին եւ բարեկամներին իր երիտասարդ որդու՝

մահը, որ տեղի է ունեցել Մանգլիսում: Թաղումը լինելու է նոյն տեղում, չորեքշաբթի, օգոստոսի 30-ին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մի միջոց դարձանելու. ներքին ՏԵՍՈՒ-
թիւն. Մաժուլ, ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նաժակ Թիւրքիայից. Արաքլին
լուրեր. — Հնդկագիտներ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
թիւններ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նաժակներ Պա-
րիզից:

ԿԱՅ ՄԻՋՈՑ ԴԱՐՄԱՆԵԼՈՒ

Մեր երկրի մէջ կան հազարաւոր մարդիկ, որոնք ի բնէ զրկված լինելով լսութեան զգայարանից, դատապարտված են մնալու և համր դրութեան մէջ: Այդպիսի դժբաղդներին համար քաղաքակրթ երկիրները հիմնել են դպրոցներ, որոնք նրանք ուսանում են կարգալ, զրել, խօսել և արհեստագիտութիւն: Դպրոցները վերջացնելուց լիովին համրութեանը ձեռք են բերում բնութագրութիւն հասկանալու ոչ միայն այն ամենը, ինչ որ կատարվում է նրանց շուրջը, այլ և նրանցից հեռու տեղերում, մի և նոյն ժամանակ նրանք կարողութիւն են ստանում հայթայթելու իրո՞նքն օրակա մարդկային:

Մեր համրուխուլերը սպասում են այն նախանձերի ժամանակին, երբ մեր երկրի զանազան մասերում բացված կը լինեն նըրանց համար կրթարաններ, որոնց միջոցով այդ զրկվածները կը մեղմացնեն բնութիւնից ստացած դժբաղդութեան ծանրութիւնը։ Եւրօպական միութեանտնտնութեան խաշումն են աւելի քան 200,000 համր ե խաշում, իսկ կրթարաններէից օգտվում են միայն մի քանի հարիւր անձինք։ Անկաս-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ኒ ሁ ሆ ሁ ሃ ኒ ቴ ሶ ግ ሁ ሶ ኮ ደ ኮ ያ

XI

Այն օրից, երբ մարդկութիւնը ոտք կոխեց ինքնագերտակցութեան ուղիի վրա, լաւագոյնն ապագայի նկարագրութիւնը դարձաւ մարդու երեւակայութեան ու երազների գլխաւորը նիւթը: Դարերի ընթացքում դուռ են եկել մի շարք ամառաներ, որոնք, ըստ իրանցից գիտացածին կամ հաւատացածին, բայց մի եւ նոյն ժամանակ իրանց ժամանակակից կեանքի պահանջներին աւետակցելից, նկարագրել, պատկերացրել են երեւակայած աշխարհը, ցանկալի երկրիը, ուր «մեղք եւ կաթժ է ըղիւում անալիս»:

Այդպէս, մի քանի հազար տարի մեզանից առաջ յոյն փիլիսոփայ Պլատոնը իր «Հանրապետութիւն» գրքում ներկայացրեց իր երեւակայած ապագայ եւ մի եւ նոյն ժամանակ իրեղեկական կայանակերպութիւնը՝ Նոյնպէս միայլ յոյն փիլիսոփայ, Արիստոտելը, իր «Պօլիտիկա» աշխատութեամբ դժագոյնց ապագա լաւագոյն հասարակական կազմը՝ Դրանից յետոյ ժամանակի ընթացքում համարեաւ բոլոր գրազեւ ազգերում դուռն են եկել բանաստեղծներ, գիտնականներ, կրօնական եւ քաղաքական գործիչներ, որոնք, դժգոհ ժամանակակից կարգ ու ասարքից, փորձել են տառելի երջանիկ կեանքի պատկերել։ Այդպէս Իսլայացի կապալանեկան միջին դարերում տրուեց «Արեւի Հայրենիքը», յետոյ Հօբսբարտը

կած այդ տխուր հանգամանքը պետք է հոգատարութեան առարկայ լինէր այն շրջանների համար, որոնք վերցրել են իւրանց վրա համրութիւններին օգնելու հոգատարութիւնը: Մայր Կայսրուհու խնամակալութեան տակ գտնվող հոգաբարձութիւնը այժմ յատուկ շրջաբերականով դիմել է նահանգապետներին եւ առաջարկում է նպաստել գործին, աշխատելով ձեռք բերել քաղաքներում եւ գաւառների յարմար կէտերում համրութիւնների համար փոքրիկ կալուածներ եւ դաստակերաններ, որոնք կ'ընթացի կարողանային սովորել ոչ միայն հրադիտութիւն, այլ եւ արհեստներ եւ գիւղատնտեսութիւն:

Մոլորեցնելով Համրուխուլին կարգալից-
բել, տալով նրա ձեռքը արհեստ ե զիւղա-
անտեսական ախպիւր զիտուլթիւն, ինչ-
պէս են, օրինակ, այգեգործութիւնը, բան-
ջարաբուծութիւնը, շերամապահութիւնը,
մէնք վերադարձնում են ազգաբնակիչ-
ներանը նրա զրկված անդամին ախպիւր
ընդունակութիւններով, որոնք տալիս են
նրան ոյժ՝ դիմանալու զոյութեան կուլ-
հարուածներին և սեփական աշխատան-
քով ապահովելու իր կեանքը:

Յանկալի է, որ մեր քաղաքներն էլ այս-
ձագանք տալին այդ հրաւերին և օգնելին
մեր երկրի մէջ գանձող համուխուներին
ոսքի կանգնելու, որով թէ այդ դժբաղդ-
ները իրանք մխիթարված կը լինեն և
թէ այլ ևս իրեն դժուար բեռը չեն ծան-
րանայ ազգաբնակութեան վրա:

«Լեւիաթան» պոէման գրեց: Երեւակայութեան աշխարհում սաւառնեց եւ հռչակաւոր Բուսսոն: Բայց դրանցից ամենանշանաւորն էլ անգլիացի Թոմաս Մօրը, որ գրեց «Ճանապարհորդութիւն դէպի Ուստայա կղզին»: Հէնց այսօրից միջազգային բառարանը ընդունեց այս «ուստայա» բառը, որ ներկայումս «երազարան», «երթարան» կ'ընեն անհամապատասխան բառերի համանիշ է դարձել, թէեւ ուստայա ղուս չէ նշանակում «անիրազարծել»:

19-րդ դարումն էլ եղել են ազազայ հասարակական կեանքի ճշգրիտ նկարագրություններ, ինչպես Կաբէի «Իվարիայի ճանապարհորդությունը», ուստի հրապարակախօս Չերեխեյկովսկու «Խոչ անելու վէպը» Վերջին քառարկայ մէջ էլ գուրու եկան մի քանիսը ե հասարակ միաժամանակ զանազան երկիրներում։ Աւելի երջանիկ ապագայի պահանջը ե դժգոհությունը ներկայից կարծես անհրաժեշտօրէն անդրադարձած էր բոլոր ազգություններին գրականութեան մէջ։ Այդպէս՝ Վերջին Մօրիս Անգլիայում, Հէրցցայ Գերմանիայում, Բելլամի Ամերիկայում, եւ այլն։ Մենք՝ հայեր էլ այս անգամ, ինչպէս եւ մի քանի ուր, տեսական հարցերում յետ չը մնացինք։ Եւրպայից ե վերջինիս կենսատու արքը մեր փերին էլ հաստե եւ մեր առաջուտ արիւն լուաց։ Եւ յիշուի, թէ չէ յիշում Բաֆֆը «Խեղժի» վերջին գլուխը—ապագայի պատկերը իր ժամանակին եւ չափ ժամանակ յետ մշնջան մտքեր էր յուզում. անկարելի է գոհ ճիւղաւանդի կերպով չը յիշել այստեղ, որ Բաֆֆին իր «Վարդանի երազով» սրաց տուես, կանգնած հայկական հողի վրայ, նա յետ մնաց մի եւ նոյն ժամանակ եւ եւրոպական

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

U U U O H L

Որ թիրաքահայերի մասուլը գտնվում է, այսպես ասած, «մի քանի միջնորդանքների ճնշման տակ» եւ հազիւ հազ է կարողանում շունչ քաշել, եւ որ այլ պայմաններում փոքր ի շատե՛լ լուրջ եւ համարյալ թերթ հրատարակելը մեծ արժանաւորութիւն պէտք է համարվի,—այլ յայտնի է ամենքին. բայց թերեւ շատերը չիմանան, որ թիրաքիայում թոյլ չէ հրատարակել նոյն իսկ հաղորդել այնպիսի փաստեր, ինչպէս Իտալիայի Ումբերտո թագաւորի սպանւելը՝

Անա ինչպէս է տղված այդ սպանութիւնը
հաղորդող հեռագիրը Պոսի հայ քաղցիրներում
«Մոնթը, 30 յուլիս.—Ումբերնո թաղա-
ւորը երէկ ներկայ գտնուեալ մարմնամորթ
մըքանաւարայնութեան: Իր թիկնապահին
հետ կառքը նստելէ անմիջապէս ետքը մե-

ԲԵՆԵԴ. Դ. 21

Թիւրքահայ թերթերի վարողները կարող են նախանձել ի հարկէ նոյն իսկ միգանդի հարիւր տարի առաջ մեռած Ֆրանսիացի գրող Բոմարշէին, որ առտւ էր, — ձեթէ միայն իմ գրուած քներում եւ չը լսածն ոչ իշխանութեան մասին, ոչ կրօնի, ոչ քարայրականութեան, ոչ բարոյականութեան, ոչ օգերայի, ոչ էլ ուրիշ ներկայացուցիչների եւ որ եւ նշանակութիւն ունեցող ոչ մի անձնաւորութեան մասին, այն ժամանակ եւ կարող են ամեն բան ազտա տալի երկու կամ երեք գրածնիքների հսկողութեան տակ:

կրկնում ենք, այդպիսի պայմաններում չափազանց դժուար է լուրջ եւ իր կոչման բարձրագույն դաս՝ վրա կանգնած լրագրի հրատարակել թիւիւ քիսայում, բայց այդ կարող է դրդել մեզ ներքին զգացմունքները թիւիւ քիսայում լրագրի ընդհանուր կանոնները կանգնած ենք, որն զրական պիտանշներն ենք, Սակայն այդ է կարող արել մեզ ընդհանուր այդ լրագրի ընդհանուր այն բոլոր կետերում, որոնք միմյան ընդհանուր ենք ազատ կամքին են կանխած

Իսկ այսպէս լրագրի կը գործէր ձեզ վրա ընթերցող, եթէ այսպիսի մի բան կարողայ մի ուսումնայ պարբերական հրատարակութեան մէջ:

մ լուսատու, գաղափարներից:

Բայց զարմանալի բան, չը նայած այդքան
քանակությունը դուրս եկած գրքերին, որոնք
ապագայի նկարագրություններ են զբաղված
համարեա ամեն մի սերունդ իր պարտականու
թյունն է համարուած կարելիին չափ գերտախ
նորէն նախատեսել 50 կամ 100 տարուց յետ
գալիք կեանքի պայմանները Խնքոս սօցիոլո
գիական գիտությունը երբեք չէ զբաղվել ե
լ կարող զբաղվել այն մանրամասնութիւնն
րով, որոնք գոյութիւն պիտի ունենան ապ
գայ կազմակերպութեան մէջ։ Այստեղից ա
րէն լինիլիքը տեսնուի է, որ այն բոլոր
ինչ ըստով է 100—200 տարուց յետոյ լին
լիք երեւոյթներն ժամին, աւելի շուտ երեւ
կայութեան արդիւնք կարող է համարվ
քան թէ մի որ եւ չլուրջ հետախուզութիւ
րանց մեծամասնութիւնը մի նպատակ ուն
այն է՝ ժողովրդականացնել յայտնի թէօրի
ներ, բոլոր գաղափարներ եւ կարելիին ն
այ ըստ իր գործնական գոյն տալ։ Այդ նպ
տակով է, որ նրանք զրկուած են վէպի, պո
մայի կամ ճանապարհորդութեան ձևով
այգլխիով նրանք աւելի մտաշղիկ են լին
ունիլիքը հասարակութեան եւ ուրեմն յայ
նի հասարակական գաղափարներն էլ հեշտ
թեան են տարածում։

Այգլախիների շարքին է պատկանում
ը, նորերս դուրս եկած ֆրանսերէն լեզուով
ոյ նոյնպէս վէպի ձևով գրված «Մեր թոռն
նէ մօտ» («Chez nos petits fils») գիրքը, որի
ն քինակն է Էօմէն Ֆուրնիէր, բանուոր կ
որ սակցութեան ներկայացուցիչը ֆրանսերէն
չը պատգամաւորների ժողովուսէ. Դա այն ֆր
ն պաշտօններինն է, որոնք վերջին ժամանակն

«Մեր ընթերցողներուն, գրում է «Արև-
ւելքը», իր յանձնարարելիք էշան Չամչիչան
վաճառատունը, որ հարսանեաց վերջին նո-
րաձեւութեամբ մտնի իր ծախի խիտ նը-
ղատաւոր պայմաններով երթալ եւ տես-
նելի է. Պոլսի, Գամանաօ խանի տակը»:

Լրագիրը պետք է մի գործիք լինի որով աշխարհայեացքը տարածվում եւ ընթերցողի ուշադրութիւնը կենտրոնացած պահելու իր ազդի եւ ամբողջ մարդկութեան վշտերի եւ ուրախութիւնների վրա, եւ ոչ թէ այս կամ այն անհատական համար րէկլամներ գրելու։

Վատ սովորություն է նորից և և սեփական աշխատակիցներին և նրանց յոգումաները վառաբանել, ինչպես անում է, օրինակ, «Սուրհանդակը».

«Անր նոր թերթօնն է «Արդշ գաղտնիքը» (հնչ վերջին) է»։ Բոլորովին ինքնապիր (կհ սատ անքնապիր վկայի էլ- են լինում Պոլ սոմ) .. Վստահ ենք, որ ԼիՈՒՆԻԻՆ այս ինք- նապիր գործն ալ այնքան հաճողով լիտի կարգապահ, որքան համարվածվածը կը կարգապահին «Սուրանադակի» մէջ իր գրած խմբագրականները եւ պատմական տեսու- թիւները»։

Գիտենք, մեր թիրաքահայ եղբայրները մեզ կառարկին, թէ այդ բանը ընդունված է եւրօպական թերթերից չատերու՞մ: Բայց դա առարկութիւն չէ: Այդ սովորութիւնը եւրօպական մամուլը բարոյապէս օգնող թոյնի թոյլ արտայայտութեան չէ՝ հետեւել եւրօպական մամուլին ամեն բանում: Արեգակը իր բծերով չէ, որ լուսաւորում է աշխարհ, ինչպէս վաղուց նկատել է մի խելք մարդ: Քաղաքակրթութեան շողջերը մտցրէք մեր խառը անկիւնները, բանը հանգիստ թողէք իրանի տնջերում, ուր նրանք անպօտ կանխեալապէս զմամուսիք ընթացնում:

Եւրօպական քաղաքակրթութեան այդ բծերից մէկն է եւ միախօնելութիւնը, որ այնքան ցանկաւորւած է մտցնել մեր կեանքի մէջ «Լեւուքի» աշխատակից Մուշեղ վարդապետը։ Այդ հայր-սուրբի կարծիքով, մեր յաջորդներն ու առաջնորդները միմիայն եկեղեցական վարչական գործերով են զբաղված, որ կարելի է յամենակ աշխարհականներին, եւ առնետեւին չեն տաժաժում աշխտակալ ժողովուրդի հարեւան ցեղերի հոգով փրկութեան մասին։

ինքնազարգացման եւ տաղանդի չնորիւ հա
ստրակ արհեստավորից դառնում են ժողովրդի
ներկայացուցիչ, հեռուոր, հրապարակախոս
չառ անգամ նոյն իսկ թատերադեր կամ վի
դյաան:

Թէ՛ որքան ՎՄԵր թողնելի մօտ՝ վէպը հա-
մադաստասխան է գեղարուեստական անհրաժեշ-
պահանջներին, այսինքն որքան որոշ զգացմունք-
ների կամ մտքերի պատկերաւոր արտա-
յայտութիւնն ենք տեսնում՝ այդտեղ՝ դժուա-
րանում ենք ասել. մեր համայն կարծիքով
(հակառակ այն կարծիքին, որ ունի ժողովը
որը այդ վէպին յատուկ առաջնորդող նշուի-
րէք վէպը բաւական հեռու է կանգնած գեղա-
արուեստից, Բեկամբիի ճշարիւր արտաբ-
յայտում, օրինակ, անհամեմատ աւելի տաղան-
է երեւում, քան Յուրնիէրի գրքում, բայ-
ժուրնիէրի վէպի զլլաւոր ինքնօրոյնութիւն
հէջք այն բանումն է, որ մինչդեռ Բեկամբի
ամեն րոպէ աշխատում է մեզ գործաջենկ
նոր, մեր կենսաբնից արմատապէս գտածու-
խարհով *), Յուրնիէր, ընդհակառակը, նկար-
գրում է ֆրանսիական հաւարակական կազմ-
կերպութիւնը հարկի տարուց յետոյ իբրեւ
զուտ էօլիւցիայի հետեւեղ. նրա նկարագրու-
նոր կենսաբ. բոլորակայէն հնի շարունակութիւն
է եւ դեռ փոքր կապերը չէ խզած սրա հետ

*) Ի զայդ մենք հաստատ արդիւից գիտենք,
 Ռեկամիլի Հայրիք տաղարկ լալոք վէպ թարգման
 ին պոյլ Լազարոս Աղայեան եւ Ռ. Բաճաղապետ, մին
 իակ պոյլ թարգմանութեան հրատարակիչը տպարան
 Սեան անհրաժեշտ պայմաններն էլ ձեռք բերած
 ձեռք է որոնմ ցանկալ, որ պոյլ գիրքը շուտ դու
 րան եւ հայ գաղափարք ընթերցողին կարելի լինի տ
 ձնուպայ երկտր ու տաղարկից երկնութիւն անցկաց
 իլ հետաքրքրութեամբ ու խորհրդածութիւններով:

Ռ. Բ.

Տարբերակ մարդիկ են մեր հոգեւորականները: Ամբողջ Ասիան եւ Եւրոպան գոռում են, որ միասնեցնենք եւ այժմեան չինական դէպքերի պատասխանատուները, իսկ մեր հայր-սուրբնեւրը ներքողներ են գրում միասնեցնելին եւ իբր հետեւելու արժանի օրինակ ցոյց տալիս նրանց:

Քարերը աղաղակում են, որ մեր թիւրքահայ հոգեւորականների ամենամեծ գործը այժմ որբերի խնամքն է, իսկ ինչ որ Մուշեղ վարդապետ ցուում է, որ մեր մէջ լաւ յաջող եւ առաջնորդ համարվում է նա, ով ժողովրդին լաւ է կառավարում եւ կարողանում է նրա արդար իրաւունքը պաշտպանել:

Որբերի մասին խօսելիս մենք ընտանեկան դուրսգործութեամբ (ասօցիացիայի) յիշեցնենք Գրիգոր Զանգեանին: «Русская Мысль» ամսագրի օգոստոսեան տետրում հետեւեալ տողերն ենք կարդում նուիրված հանգուցեալ հրապարակախօսի յիշատակին:

«Մահը խլեց վերին աստիճանի շնորհալի (ВЫСОКОДРОВИТЕЛЬ), ջերմ հրապարակախօսի, որ այնքան եռանդուն, այնքան պերճախօս կերպով ժողովրդականացնում էր «Մեծ թէֆօրմները չրջանի» գործիչներին եւ նրանց գործերը: Գրիգոր Զանգեան անխնայ կերպով հետեւում էր ամեն մի առիթի, որպէս զի հասարակութեան յիշեցնէր վաթսուներեակ թուականների այս կամ այն թէֆօրմի մասին, այդ թէֆօրմների հանգուցեալ կամ դեռ կենդանի ժամանակների մասին: «Русская Мысль» ամսագիրը յանձն էր Զանգեանի ունէր մի սթափ եւ արի պահպանող լուսաւոր, հումանիտարական գաղափարների: Հայ լինելով ժողովուրդի եւ ջերմ նուիրված իր հարազատ բազմաշարք արգելի, Զանգեանի մի եւ նոյն ժամանակ իսկական ուսուսմար էր, որ ապրում էր մեր «մտքի իշխանների» իդէալներով»:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Շաբաթ օրը, օգոստոսի 26-ին, Թիֆլիսի կաթոլիկական եկեղեցում հոգեհանգիստ կատարվեց իտալական Ումբերտո Թադաուրի յիշատակին: Եկեղեցում մեծ բազմութիւն էր հաւաքվել:

Գրքեր, ձեռնարկներ եւ դասական առարկաներ վաճառելու համար թող է արված տեղական ինքնավարութեան օրհաններին բանալ պահեստներ: առանց սահմանաւ տուրք վճարելու: Առեւտրի զեպարտամենտը ազատել է այդ հիմնարկութիւնները վճարից այն հիման վրա, որ դրանք առեւտրական ձեռնարկութիւններ չեն, այլ նպատակ ունեն ազգայնականութեան ձեռքը տալ է փանագին գրքեր եւ ուսումնական առարկաներ:

Արեւելեան-չինական երկաթուղու վարչութիւնը որոշել է Մանչուրիա ուղարկել մի ա-

նա առաջ է եկել ինքն ըստ ինքեան խաղաղ, հանդարտ ճանապարհով, ինչպէս առաւօտը գիշերից յետոյ, առանց մարդկային զոհեր պահանջող արեւնայից յեղաշրջումների:

«Մեր թոռների ծոտ» վէպում ներկայիս վեհ գաղափարներից դեռ բոլորը չեն իրագործված եւ թէեւ կեանքը նոր հիմքերի վրա է դրած, բայց մի եւ նոյն ժամանակ պատահում ենք եւ այնպիսի բացասական երեւոյթներ, որոնք այժմ էլ կան: Պէտք է, սակայն, ասել, որ հեղինակը իր հերոսի բերանով բացատրում է, թէ դա լիկ աստվածի օրէնք է եւ ուրեմն այդ դէպքում ոչ այնքան թոռներն են պատասխանատու, որքան իրանց մեծ հայրերը, որոնց բացասական հակընկերային ընտանիքներն են ժամանակ առ ժամանակ, որպէս կօշմար, երեւան դալիս իրանց թոռներին արարքներում: Ի հարկէ, վէպի հեղինակը այդ բացասական երեւոյթների վրա նայում է իբրեւ մօտ ապագայում անհետանալիք արատների վրա:

Վէպի հերոս Պիէր Դավանը, ենթարկվելով բժշկի կողմից հիպոսթիզմի, տեսնում է ինքն իրան մեղմից հարիւր տարի յետոյ Պարիզում բոլորովին նոր հասարակական պայմաններում: Եւ ահա խօսակցութեան ու պատմութեան ձեւով մեր առաջ հերթով պատկերանում է այդ ապագայ ժրանսիրայի ամբողջ կեանքը: Մէկը միւսի հետեւից նկարագրված են հասարակական, քաղաքական, տնտեսական եւ մինչեւ իսկ բարոյական ու մտաւոր կեանքի հիմքերը, մարդկանց հայացքները, սովորութիւնները, խօսելու ու ուսուցելու, զբօսնելու ու սիրելու ձեւերը: Այդ բոլորը այստեղ մէջ բերելը անկարելի կը լինէր, ի հարկէ, սակայն աւելորդ չենք համարում մի քանի խօսքով դժգոհել:

առնձին յանձնաժողով, որի նպատակը պէտք է լինի պարզել զծի այժմեան դրութիւնը եւ որոշել այն վիճանների չափը, որոնք հասել են նրան վերջին թշնամական գործողութիւնների ժամանակ: Յանձնաժողովը կը կազմվի 30 անդամներից՝ նախագահութեամբ ինժեներ Խօգորովսկու: Յանձնաժողովը հասարակ ինժեներ սեպտեմբերի կէսին:

«Bulletin de Sociologie internationale» հազորում է, որ մեր աշխատակից Ռուբէն Բերեան Պարիզի հասարակագիտական ընկերութեան անդամ է ընտրվել եւ այդ ընկերութեան ժողովում մի գեկուցում է կարգացել «Նախնական ժողովուրդների բանուորական երգերի եւ պարերի մասին» տնտեսական մատերիալիզմի տեսակէտից»:

Ռուսաց երկաթուղային դժերի ներկայացուցիչներից կազմված համագումար ժողովում, ի միջի այլոց, ցանկութեւն յայտնվեց օրէնսդրական կարգով կանոնադրելու օրական աշխատանքի տեւողութիւնը բոլոր ծառայողների համար: Այդ հարցը քննարկուելիս՝ ժողովը եկաւ այն եզրակացութեան, որ շատ գիտար է ընդհանուր որոշումներ կայացնել զանազան տեղերի եւ զանազանատեսակ ծառայողների օրական աշխատանքի տեւողութեան վերաբերմամբ, ուստի եւ վճովեց առ այժմ ինչպիսի երկաթուղիների գլխաւորներին եւ կառավարիչներին հաղորդել իրանց զիտողութիւններն այդ գործի մասին:

1898 թւի մայիսի 18-ին Բարձրագոյն հաստատված պետական խորհրդի կարծիքով Ռուսաստանի ներքին նախնայինքը քաղաքները ազատված էին բանտերը լուսաւորելու եւ տաքացնելու ծախսերից: Այժմ, ինչպէս հաղորդում են մարաքաղաքի լրագիրները, 1901 թւի յունվարի 1-ից սկսած՝ այդ ծախսերից ազատվում են նաեւ Անդրկովկասի բոլոր քաղաքները, որոնց հետ միասին եւ մի քանի քաղաքներ Դոնի, Թերեքի եւ Կուբանի ջրերի շրջաններից—Բոստով, Վլադիկավկազ, Ղալար, Մոզդոլ, Տաւրուսի, Պետրոպոլի, Գէօրգի-եւսկ, Գրոզնի, Եկատերինօպոլ, Տեմրիկ, Եյսկ եւ Մայկոպ:

ՍՂՆԱՅԻՑ մեզ գրում են. «Յայտնի է, որ եկեղեցական կանոնների համաձայն, երէցփոխի պաշտօնը սահմանված է երեք տարով, սակայն այդ օրէնքը մեր քաղաքում զանցառութեան է ժամանում: Ահա 12 տարուց աւել է, ինչ ա. Գէորգ եկեղեցու երէցփոխը վարում է պաշտօն առանց վերնորոշութեան: Ճարտիկէ-կօշիկից եկեղեցու երէցփոխը 15 տարուց աւել վարում է պաշտօն նոյնպէս առանց վերնորոշութեան»:

Նախ եւ առաջ Պիէր Դավանը մի այնպիսի հասարակութեան մէջ է ընկնում, ուր ոչ մի խոշոր մասնաւոր սեփականութիւն չը կայ: հողը, գործարանը, ինչպէս եւ առհասարակ արդեւագործութեան բոլոր միջոցները դարձել են ազգային կամ հաւաքական սեփականութիւն, ազգային, որովհետեւ դրանց տէրը ոչ թէ այս ինչ անհատ կամ ընկերութիւնն է, այլ ամբողջ ազգը: Միեւնն եւ տեխնիկան, ինչպէս եւ քիմիան այնպիսի արագ քայլեր են արել եւ այնպիսի առատութեամբ կարելի է արտադրել, որ էլ բաւական է, եթէ ամեն աշխատանքի ընդունել անհատ օրական աշխատեւ 2—3 ժամ, օրվա մնացեալ ժամանակը նրա ազատ կամքին է թողնված եւ նա զբօսնում է, կարդում եւ կամ վերջապէս գեղարուեստներով է զբաղվում: Նոր Ֆրանսիայի քաղաքացիները ամենայն սիրով զբաղված են իրանց յանձնած եւ իրանց ընդունակութեան համապատասխան աշխատանքով: Մարդկային անհատականութեան եւ հասարակութեան պահանջների մէջ տիրում է կատարեալ համերաշխութիւն եւ մէկը միւսին չէ հակառու ու չէ կաշկանդում, ինչպէս այդ տեսնում ենք ներկայումս: Վէպի հերոսի եւ օր. Լուիզի փոխադարձ յարաբերութիւնը, իր միջոց իմանում ենք, որ մարդու եւ կնոջ սերը ազատվել է իր որոտինական ու կեղծաւոր պայմաններից: որքան իրանց աւելի ազատ են զգում զգացմունքների վերաբերմամբ, այնքան աւելի հաստատվում է միակնաւորութիւնը, հակառակ ներկայ իրականութեան, երբ ընտանիքը թէեւ արտաքինում մի զույգ եւ կազմում, բայց իրօք ամուսինները զաւոր օրէնքն իրանց զգացմունքներին ազատ ընթացք են տալիս. եւ գաղտնիքն, որովհետեւ ներկայ

ՎԵՐԻՆ-ՂԱՐԱՆԼՈՒՄ գիւղից (Նոր-Բայազէտի գաւառ) մեզ գրում են. «Մեկանում խոտի հունձը վերջացաւ: Այս տարի այնքան խոտ են հնձել, որ տեղ չը կայ մինչեւ անգամ գիղելու: Այժմ խոտի սալը (120 խորձ) ծախվում է 2 ռ. եւ 2 ռ. 50 կօպ, մինչդեռ անցեալ տարի ծախվում էր 10—15 ռ.: Գարու հունձը սկսվեց յուլիսի 28-ին: Անցեալ տարի այսպէս շուտ չէր սկսվել. գարին էլ շատ առատ է»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԳԻԱՅԻՑ

Մ ու չ, օգոստոսի 20-ին

Ս. Կարապետի միաբաններէն՝ Նորատուհնական Մովսէս սարկաւազը, վանքէն 2 ժամ հեռու կողոպտված եւ սպանված է: Մանրաբանութիւններ դեռ յայտնի չեն:

Մովսէս Նորատուհնականը՝ իր ուսումը առած էր ա. Կարապետի ժառանգաւորաց վարժարանը: Նա ուսուցչութեան պաշտօն վարած է Միայնեալ ընկերութեան Պալատի եւ Քիլի վարժարաններում մէջ: Այնուհետեւ ա. Կարապետի վանքին քարտուղար եղած է եւ յետոյ հայերէնի եւ պատմութեան դասատու: Նոյն վանքի ժառանգաւորաց վարժարանին մէջ, 1890-ին աւագ սարկաւազութեան աստիճան ստացաւ եւ արտակարգ կորով ու եռանդ ցոյց տուաւ վանական պաշտօններում մէջ: Այդ պատճառով մոյի եւ զեղծ միաբաններու ատելութեան նշաւակ եղաւ, որոնք մինչեւ զայն մատնելու չափ առաջ դացին Նորատուհնականը 11 ամիս բանտարկութեան տառապանք քաշեց եւ եւ 95-ի ընդհանուր մոռացումով միայն ազատվեցաւ, թէեւ ռիսկալ կը բարց հալածանքը անոր դէմ շարունակվեցաւ:

Նորատուհնական իբր եռանդուն գործիչ ծանօթ էր ամէն անոնց ալ, որոնք Տարուն այցելած էին: 1895-ի եւ 96-ին, Նորատուհնական կարեւոր դեր մը կատարեց ա. Կարապետի վանքի պաշտպանութեան մէջ՝ զլուս կանդնելով խուճը մը կտրիճ երիտասարդներու: 300 քիւրդ բաղկացեալ հրոսախումբ մը կողոպտելու ետ դարձաւ, չը կրնար վանքին վրա յարձակիլ: Մովսէս Նորատուհնականի անունը այն օրուին քիւրտներու բերանը կը պտտէր... Հանգիստ իր ոսկորներուն:

Աստղիկ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«L'Italie» լրագրին վաշինգտոնից գրում են. «Պատերազմական միջոցաւորութիւնը հրատարակեց Ազգայնալոյքի բանակում գտնված վաւերացութիւններ եւ նամակները, որոնցից երեւում է, որ ամերիկացի հակամպերիալիստները օգնում էին ֆիլիպպինցիներին Կաւա-վարութիւնը վճել եւ դատի չենթարկել դաւաճաններին: Նրա կարծիքով, այդ հրատարակումը ինքն ըստ ինքեան բաւարար պատիժ է նրանց համար»:

բուրժուազական կազմակերպութիւնը այնպիսի պայմաններ է մարդու առաջ դնում, որ «ազատ կենակցութիւնը» շատ անգամ միայն ոչ «ազատութիւն» կարող է տեղի ունենալ:

Գալով կրթութեան եւ գիտութեան ապագայ Ֆրանսիայում, մենք տեսնում ենք, որ գոյութիւն ունեն բոլորովին նոր մեթօդներ, որոնք արմատապէս տարբերվում են արդի ֆրանսիական մեթօդներից ու սխտեմներին: Հեղինակը մեզ ծանօթացնում է եւ լրագրական ու գեղարուեստական գործի հետ, որ էլ չը գիտէ թէ ինչ բան է կաշառքը, սուտը, զրպարտութիւնը, հիւանդ երեւակայութիւնը եւ այլն: Կաթոլիկութեան պետի վերաբերմամբ վէպի հեղինակը անսպասելի կերպով է լուծում խնդիրը: Այդպէս՝ իմանում ենք, որ հարիւր տարուց յետոյ պապականութեան հեղինակութիւնը այնքան ընկած է արդէն, այնքան ժողովուրդը անտարբեր է դէպի Հոռի քահանայապետը, որ վերջինիս մշտական բնակարանը հաստատված է Պարիզի մի աղքատանոցում՝ անկեղծոցում: Իմանում ենք նոյնպէս հերոսի խօսակցութիւնից, որ Գերմանիա, Աւստրիա, Իտալիա եւ այլն հանրապետական ձեւ են ստացել, իսկ Դանիա-նոյն հնդկաստան գրանցված երկիրները ու մանր ազգութիւնները թէեւ անկախ են, բայց բոլորը միասին մի ընդհանուր դաշնակցութիւն են կազմել:

Սակայն մի հարց. ինչպէս է այդ ամենը կատարվել: Շնորհիւ տնտեսական կեանքի առաջադիմութեան, չնորհիւ բանուորական համարեան միութիւնների եւ կօօպերացիաների հողը այնքան պատրաստ է եղել, որ ոչ մի բռնութիւն չը գործածելով, ոչ մի առեւտրութիւն չը յարուցանելով, միայն ձայների մեծամաս-

—Թարիգից մեզ գրում են. «Հունձը այս տարի լաւ է. ցորենի ալիւրի գինը բաւական իջել է թէ այստեղ եւ թէ գաւառներում: Հայ շատ են թխում եւ մեծ մասամբ մաքուր»:

—Ինչպէս հեռագրում են գերմանական լրագիրներին, սուլթան Աբդուլ-Համիդ II-ի թագաւորութեան քանակահարկով տնային մեծ հանդէսով: Իլդիզ-Քիօսկում տեղի ունեցաւ օտարերկրացի դեսպանների եւ պատգամաւորների ընդունելութիւն: Սուլթանը հերթով շնորհակալութիւն էր յայտնում բոլոր շնորհաւորողներին եւ չէր թաղցնում իր ուրախութիւնը այն բարեկամական ցոյցերի առիթով, որ արել էին նրան օտար միապետներ եւ կառավարութիւնները: Քանահիդգամեակի տնայնաւորութեան օրը պալատում ստացվեցին հազարաւոր շնորհաւորական հեռագիրներ աշխարհի բոլոր ծայրերից եւ բազմաթիւ ընծաներ: Սուլթանը, ի միջի այլոց, շնորհաւորական հեռագիրներ ստացաւ գերմանական կայսրից, թուրքական, չիլիական, բելգիական թագաւորներից եւ Չերնօգորիայի իշխանից: Կ. Պօլսի փողոցները զարդարված էին թիւրքական եւ օտարերկրացի դրօշակներով: Երեկոյեան տեղի ունեցաւ շքեղ հրավառութիւն: Լուրեր կային, թէ սուլթանը իր թագաւորութեան քանահիդգամակի օրը մատչել է ընդհանուր ներուժն շնորհել քաղաքական յանգուցողներին, բայց այդ լուրերը մինչեւ այժմ չը հաստատվեցին: «Berliner Tageblatt»-ին հաղորդում են, թէ թիւրքական նշանաւոր գործիչներից մէկը, Իլդիզ-բէյ, արտասահմանում ապրող իր որդուց ստացաւ մի արկղ՝ իբրեւ ընծայ ներկայացնելու սուլթանին՝ նրա քանահիդգամակի տնայնաւորութեան օրը: Իսպէտ-բէյ կատարեց որդու յանձնարարութիւնը, սակայն արկղը բանալուց յետոյ, նրա մէջ ընծայի փոխանակ, գանձիցին մեծ քանակութեամբ հալախաւա-վարչական քրօշիւներ եւ սպանական նամակներ: Սուլթանը հրամայեց քննութեան ենթարկել այդ գործը եւ Իլդիզ-բէյին հրաժարեցրեց պաշտօնից:

—Narodni Listy»-ն հաղորդում են Բելգրադից, թէ սեպտեմբերի 11-ին, սերբիական թագաւոր ծննդեան տարեդարձի օրը, այն բազմաթիւ քաղաքական յանգուցողները, որոնք դատաւարված են երկար տարիների բանտարկութեան Միլանի դէմ իբր սպանութեան փորձ անելու համար, ազատվելու կը ստանան: Թագուհին ինչպիսի եւ ստացել է թագաւորից նրանց ազատութեան իրաւունքը, որպէս ընծայ իր ծննդեան տօնի օրը: Այժմ դատաւարականները ամենատեսակ արժանութիւններ են վայելում բանտերում եւ ներման տեղիկութեամբ արդէն հաղորդված է նրանց:

—Ռուսիայի Ռուսաստանի վերջին ազգայնական մասին, «Standard» ասում է. «Ռուսաստանի ձգտումը, որքան կարելի է չուտով տանելու գործերը Պեկինից, բացատրվում է այն դժուարութիւններով, որոնց հանդիպել է նա Մանչուրիայում, իսկ Ամերիկայի վարժուէքը կարելի է հասկանալ՝ միմիայն ի նկատ առնելով նախապահական ընտրութիւնների պաշտաւոր: Երկրկայ հանգամանքներում հեռացել գործերը Պեկինից—նշանակում է թող տալ, որ Չինաստանում յայտնի հանդիմանող օտարերկրացիներին թշնամաբար վերաբերվող կուսակցութիւնը, չինացիները, անշուշտ, այդ հանգամանքը կը բացատրեն որպէս նշան օտարերկրացիների վախկոտութեան»:

նութեամբ, մտաւոր ու ֆիզիկական աշխատանքի պրօլետարիատը իր ձեռքն է առնում կառավարութեան ղեկը: Նախ եւ առաջ իոշոր սեփականատերերից առնվում են արդիւնաւոր-ծութեան բոլոր միջոցները եւ նրանց նշանակվում է մի միջին կենսաթոշակ, իսկ մանր սեփականատերերին կառավարութիւնը ձեռք չէ տալիս, մինչեւ որ նրանք իրանք մի սերունդի ժամանակամիջոցում կամայ կամայ-անհետանան ընդհանուր հաւաքական սխտեմի յանդիման: Այս բոլոր փոփոխութիւնները հեշտաւում են եւ այն բանից, որ Ֆրանսիայի հետ միաժամանակ մի եւ նոյնն է անում եւ Անգլիայի ու Գերմանիայի պրօլետարիատը:

Ահա արանք են Ֆրանսիայի սօցիալական վէպի գլխաւոր գծերը. ինչպէս ասացինք վէպի ինքնուրոյնութիւնը այն բանում է, որ հասարակական նոր կազմակերպութիւնը երեւան է դալիս պատմական անխուսափելի է-վօլուցիայի օրէնքը հիման վրա, որի վերջին օղակն է հասարակական բոլորովին խաղաղ եւ հանգարտ յեղափոխութիւնը:

Այդ վերջին եզրակացութիւնը ֆրանսիայի ընկերավարական դրքում ինքն ըստ ինքեան շատ բնորոշ է եւ ամենեւին չէ համապատասխանում բանուորական կուսակցութեան մէջ մինչեւ այժմ ընդունված այն կարծիքին, թէ նոր հասարակական կարգը փոթորիկի միջոց պիտի ծնվի, բնորոշ է, ասում ենք, որովհետեւ ինքը ժամանակակից Ֆրանսիան քանի զնում կորցնում է իր նախկին յեղափոխական (քաղաքական մտքով) ոգին եւ դանդաղ է էվօլուցիոնիստ-բարենորոգիչ, թէեւ փիլիսոփայական մտքով միշտ յեղափոխական:

Ռուբէն Բերեբեան

«ՄՇԱԿԻ» ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

25 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ Զինուորապետության վերաբերյալ գործերի վարչության մէջ այսօր մագլթանք կատարվեց. այս նոր կազմակերպված հիմնարկութիւնը նոյն օրն սկսեց իր գործունէութիւնը:

ՆՈՒՄԵՐՆԵՐԻ ՆՈՒՄԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Տօնալուծաւոր պաշտօնապէս փակված է: Ապրանքների ծախսվողութիւնը՝ տօնալուծաւոր մասնաճիւղերով և արտադրութիւններ ունեցող մի արծաթեայ տախտակի վրայ այսօր չի սկսվում «ВЪРХЪ» չիլանարի գնի մեքենայի տակ:

ԼՕՆԴՈՆ: Դուրբանից հաղորդում են, որ երէկ հեծանքների մի պահակախումբ ընկալեց թակարդի մէջ եւ գերի բռնվեց:

Կ. ՊՈԼԻՍ: Թիւրքական զորքերը յարձակվեցին այն քրդերի վրա, որոնք մօտ օրերումս կողպուել էին Վանի անդլիական փոխ-հիւպատոսին Յանցաւորները ընկած են:

26 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ Հրատարակված է Բարձրագոյն հրաման, որով ժողովրդական դպրոցների վերադաստիարակների եւ տեսուչների նոր պաշտօններ են հիմնվում. հրամայված է նոյնպէս կազմակերպել նրանց համար դիւանատներ:

Յինսանսերի միջնատրի օգնական Բոսանով ստանձնեց միջնատրի վանքի ժամանակաւոր կառավարչի պաշտօնը:

Գինեւրա Օրլովի զորաւթինը օգոստոսի 15-ին հասաւ Ջալալաբադ. Երբ գինեւրալը շարունակում էր ճանապարհը դէպի Յիւրիկար, օգոստոսի 17-ին նրա մօտ եկան դեսպաններ Յիւրիկարի ձեռն-ձիւնի կողմից խաղաղութիւն խնդրելու Օրլովի գնապաշտարարի ուղարկեց Յիւրիկար կողմից խնդրելու դիմումները, առաջարկելով համոզել ընտանիքներին, որ նրանք յանձնեն դէպքերը եւ յայտնել ազգայնականութեանը, որ խաղաղ ընտանիքները անվտանգ կը մնան: Առաջ ուղարկված հեծանքները կապ հաստատեցին գինեւրալ Օրլովի եւ Բեննեկաւաթի զորքերի մէջ:

Գիտութիւնների կայսերական ակադեմիան Բարոն Տօլի բեռնային արշաւախմբի գլխաւորից ստացաւ հետեւեալ հեռագիրը. «Օգոստոսի 25-ին հասաւ Իւզդուխի Շար. ստորոյց քիչ է. ամառը, կարծես, բարկացող է: Այսօր գնում եմ դէպի Կարսի մասին. կը մտնեմ նաեւ Դիւկոնի նաւահանգիստը: Ամեն ինչ լաւ է»:

Կ. ՊՈԼԻՍ: Արտաքին գործերի միջնատրութեան կառավարիչ կոմս Լաւրոպոլսկին շնորհակատ է Օսմանիէի I սատանային աղանձանդայ չքանչեւ եւ միջնատրի օգնական իշխան Օրօնիսկոն Օսմանիէի I սատանային:

ԻՕԿԳՆՈՒՄ: Արտաքին գործերի միջնատրութեան քաղաքի է հեռագիր, որով հաղորդվում է, թէ «Աւս դրօշակներ» մի մեծ զորաւթին, գնեւրալ Լիւսի հրամանատարութեամբ, գնում է դէպի հիւսիս Սոնա եւ Սոնա շահանգների միջով:

ՀՕՆԳԿՈՆԳ: Այսօր լուրեր են տարածվել Լուսնալուծում պատահած լուրջ անկարգութիւնների մասին: Վուչիտի քաղաքային հարիւր զինւորների հետ միասին պաշարված է աւազակների հրոսակային խմբից: Քաղաքապետը օգնական զօրք է պահանջում:

ՎԱՇԻՆԳՏՈՆ: Պարզի ամերիկական գեսպանը հեռագրով տեղեկութիւն տուեց արտաքին գործերի միջնատրութեանը, թէ Դէլիասէից ստացել է հաղորդագրութիւն, որով նա յայտնում է Ֆրանսիայի ցանկութեան մասին: Ռուսաստանի հետ համաձայնութիւն կայացնելով, հետադիմ զօրքեր Պեկինից:

ԼՕՆԴՈՆ: Այսօր լուրեր տարածվեցին մի հեռագիր ստացաւ Հոնգկոնգի առեւտրական պալատից, որի մէջ Հոնգկոնգի առեւտրականները կարծիք են յայտնում, թէ ցանկալի է, որ պետութիւնների զօրքերը մնան Պեկինում: Կինչեւ այն ժամանակ, երբ նշանակված կը լինի իսկական կառավարութիւն եւ յանցաւորները պատժված կը լինեն:

ԲԵՐԼԻՆ: Տօկիօյից, եսպանական աղբիւրից, հետեւեալ բովանդակութեամբ մի հեռագիր է ստացված Շանգհայում. «Օգոստոսի 7-ին հրատարակված հրովարտակի մէջ կայսրը կառնկութիւն եւ ցաւ է յայտնում անմիջ ժողովրդի կրած տառապանքների առիթով նա

զիւսում է պաշտօնական չիլանների հաւատարիմ հպատակութեան զգացմունքին ներկայ կրիտիկական քայլերում եւ յայտնում է, որ միայն ինքն է մեղաւոր Զինատանին պատահած փորձանքի մէջ եւ ինքն է միայն պատասխանատու: Դրա համար կայսրը մի եւ նոյն ժամանակ հրամայում է կենտրոնական կառավարութեան բոլոր աստիճանաւորներին, հնար եղածին չափ, չուտով հաւաքվել ժամանակաւոր արքունիքում՝ այնտեղ իրանց պարտաւորութիւնները կատարելու համար: Պէտք է նշանակալի չարտակել ջանքերը օտարերկրացիների առեւտրի պաշտպանելու վերաբերմամբ ուղիղական ակնքի եւ գեսերի վրա: Վերջում կայսրը յայտնում է յայտնում, որ ժողովուրդը նրա հետ միասին կուրախանայ, իմանալով, որ կայսրուհին, Պեկինից հեռանալուց յետոյ, ողջ եւ առողջ է»:

Յուրիտից հեռագրում են, որ ամբողջ Լիւսիէյում բնութիւնների ենթարկեց տեղացի քրիստոնեաներին. վեց հարեւան չիլաններում քաղաքների գնեւրը փակված են: Լիւսիէյի տառապի պաշտօնաւորը է արված նրա համար, որ ժողովրդականութիւն չէ վաղելում եւ նրա տեղ նշանակված է Ամոյի այլման տառապը:

ԶիՖՈՒ: Ստորջրեայ հեռագրութեւն ԶիՖՈՒից Պորտ-Արտուր բացված է. նրա շարունակութիւնը ԶիՖՈՒից Շանգհայ եւ ԶիՖՈՒից Վէյ-Սոյ-Վէյ համարեա վերջացած է:

ԼՕՆԴՈՆ: Բօրեքոս հեռագրում է Բէլֆաստից, օգոստոսի 23-ից, թէ Համիլտօնի զօրաօնը երէկ անցաւ Դուլտրօմի միջով միայն չիլան ընդգրկւողութեան հանդիպելուց յետոյ: Նա գնում է դէպի Լէյդզեյտը եւ նշանայի հաղորդակցութիւն է պահանջում Բալլէրի հետ, որը կուի է սկսել թշնամու ձախ թեւի հետ եւ որի թնդանքների ձայնը լսելի է Համիլտօնին: Վերջինը աշխատում է անցնել թշնամու ձախ թեւի յետեւ: Կիսմիտոն եւ Գարտի կրկն հեծել զօրաւթինները գործում են այժմ Կրիւկէրադօրի եւ Իօհաննեսբուրգի շրջաններում:

ԲԵՐԼԻՆ: «Reichs Anzeiger» հաղորդում է, թէ Ի նկատ առնելով քաղաքային կրիտիկայ, պրոպագանդային միջնատրութիւնը որոշել է մաքսի ենթարկել օտար քաղաքային մուտքը կրիտիկային: Ստորագրութեան ժամանակ եւ առեւտրը երկու տարրի: Պրոպագանդային երկաթուղիներին յանձնարարված է անմիջապէս ձեռնարկել լինել այդ միջոցի կատարմանը եւ բանակցութիւններ սկսել այդ մասին ուրիշ երկաթուղիների հետ:

ՎԻԵՆԱ: Հրատարակված է կայսերական հրովարտակի պատգամաւորների ժողովը արձակելու եւ նոր ընտրութիւններ նշանակելու մասին:

ԼՕՆԴՈՆ: Շանգհայից հաղորդում են, թէ Նաւոնիան տեղեկութիւն է տուել պետութիւններին իր պատրաստակամութեան մասին համաձայնվելու ուստի կառավարութեան առաջարկութիւնը զօրքերի հեռացման վերաբերմամբ, այս պայմանով միայն, որ դեսպանատնի պահպան զօրք թողնվի: Ապա Նաւոնիան իր համաձայնութիւնը կախված է համարում Զինատանի պաշտօնական խնդրից զօրքերը հեռացնելու մասին եւ առաջարկութիւնից բանակցութիւնների սկսելու՝ կարգը վերականգնելու խոստումով:

Տեանձիւնից հաղորդում են, թէ միջազգային զօրքերը մասն Պեկինի արդելված քաղաքամասը գնաւզան դանդաղ, ուսման եւ փրանսիականները միասին, իսկ գերմանացիները, ամերիկացիները, անգլիացիները եւ եսպանացիները առանձին-առանձին Պեկինից հեռացան անգլիական ծովային բրիգադան եւ անգլիական պահակաւորներ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Հաղորդում են, թէ Դէլիասէ եւ Տէրօն միացան Իօհաննեսբուրգի մօտ. նրանք ընդամենը 1,800 զինւոր ունեն: Նրանք տեղաւորված են Իօհաննեսբուրգի հարաւարկող մարք բլուրների վրա: Նրանց հաւանքում համար ուղարկված է անգլիական մեծ զօրաւթին: Բօեքսերը թնդանքներ չունեն:

ՇԱՆԳՀԱՅ: Ասում են, թէ Իւնչու իր զօրքերի հետ միասին Պաոտինփուից գնաց դէպի Տայվան:

Յինսանսերի միջնատրութեան մանջուր նախագահը, Զին-Սին, Պեկինում ինքնապատնէութիւն գործեց:

Ասում են, թէ Զման-Զիլիւնի փորձը՝ 50 հազար տայլի փոխառութիւն անել չինացի վաճառականներից Սանկուում՝ չափողից:

ԼՕՆԴՈՆ: Բօրեքոս հեռագրում է, որ գեներալներ Դէնդոնալը եւ Բրոկկերստ հինգ

շարժի օրը գրաւեցին Լէյդզեյտը: Բօեքսերը հեռացան մասամբ դէպի հիւսիս, մասամբ դէպի արեւելք, ուղարկելով իրանց պաշարի թնդանքները Կրիւկէրադօր:

ԼՕՆԴՈՆ: Կապիւրները զայրոյթ են արտայայտում, որ Իւնչու եւ Սոնա նշանակված են զօրքակալներ խաղաղութեան բանակցութիւններ վարելու: «Standard» այդ նշանակումը վերաւորանք է համարում պետութիւնների համար եւ ասում է, որ այդ վերաւորանք անտանկի է: Խաղաղութեան յանձնաժողովն այդ կազմով չը պէտք է ընդունել լինի:

ԼՕՆԴՈՆ: Բօրեքոս հաղորդում է Բէլֆաստից, օգոստոսի 22-ից, թէ երկաթուղու մի կայան Պանի եւ Վոնգրաֆօնսենի մէջ տեղում, որ գրաւված էր կանադացի 125 հեծեալ նախաձեռնելով, ենթարկվեց թշնամու զօրաւթինի յարձակմանը: Թշնամին երեք թնդանքներ: Յարձակումը յետ է մղված:

27 օգոստոսի

ԳՈՒԼԱ: (Կալիպարիայում): Խաղաղութիւնը առ այժմ չէ խանգարվում:

ՀՕՆԳԿՈՆԳ: Սպասում են, որ այսօր երկու կողման անկարգութիւններ տեղի կունենան: Զօրքերին հրամայված է չը հեռանալ զօրանոցներից: Ոստիկանութիւնը հրաման ստացաւ թող չը տալ վիշապի ենթադրված թափօրը. այսուամենայնիւ չինացիները կամենում են կատարել այդ թափօրը:

ԼՕՆԴՈՆ: Հեռագիր Բէլֆաստից. «Թշնամին շարունակում է անկասկածաւ ջանքեր գործել գնացքներ խորտակելու եւ երկաթուղային գծերը քանդելու համար: Օր չէ անցնում, որ այդպիսի դէպքեր չը պատահեն: Յարձակումները անհաճոյ են, բայց իւրաքանչիւր դէպքից յետոյ թշնամին անյապաղ պատժվում է: Բօեքսերը չուտով կը հասկանան, որ յարձակումները աւելի իրանց են վնասում, քան մեզ»:

ԲԵՐԼԻՆ: Պաշտօնապէս հրատարակված է հետեւեալ յայտարարութիւնը. «Թաղաւորը, ինչպէս յուլիսի 8-ի յայտարարարում, այնպէս էլ դրանից յետոյ արտասանած ճառերում պարզապէս յայտնեց, որ չի թող սալ ինտրիգներ լարել արքայական տան դէմ եւ հաստատուն որոշումն է կապել հետո պահել արքայական տանից ինտրիգաներին, որպէս դաւաճանների: Այնուամենայնիւ վերջին ժամանակ տեղի ունեցան մի քանի այդ տեսակի փորձեր, որոնց թաղաւորը վերաբերվեց արհամարհանքով: Մի քանի օր առաջ նախկին թաղաւորի Նատալիա ուղարկեց իր օգնաւորին մի քանի նամակ, որի մէջ վերաւորական եւ ստորաւորների ռժով է խօսում արքայական զոյգի մասին: Այս պատճառով, թաղաւորի յանձնարարութեամբ, սրանով յայտարարվում է, որ ինտրիգներն եւ ցոյցերը, որոնք լինում են արքայական տան հիմունքը խախտելու համար, կը համարվեն դաւաճարական գործողութիւններ, որտեղից էլ որ նրանք բղնչեն: Ներանք, որոնք ձեռնում են խանգարել կարգը եւ խաղաղութիւնը, թող իմանան, որ նրանց հետ կը վարվեն իբրեւ դաւաճանների եւ յեղափոխականների հետ»:

ՇԱՆԳՀԱՅ: Գերմանական դեսպանական քրքիւր վերջ գտաւ, որ դեսպան Կէպտէլէրի ձեռնարկ պատճառը գնդակ էր, որ դիպել էր վրան եւ պատճառել էր անմիջապէս մահ: Սպանութիւնը կատարվել է առաւօտեան մօտ 9 ժամին: Դիակայանները դիմեցին ցունդ-լիւեամէին եւ ինդիգներն ունիւրդութիւն նշանակել իրանց առաւօտեան 9 ժամին՝ բողոքելու համար չինական կառավարութեան այն որոշման դէմ, որի համաձայն պէտք է աքսորվէր զիլլաօմաթիական մարմինը, բայց իրանց հարցապնդումին ոչ մի պատասխան չը ստացան, եւ միայն այդ պատճառով նրանք չայցելեցին ցունդ-լիւեամէին, եւ ոչ թէ յարձակման երկիւղից, որին, հանգամանքներից դաւաճելով, չէին կարող միջնել անգամ սպանել Կիտոնէրի, առանձին համաձայնութեան չնորհիւ, միայնակ գնաց ցունդ-լիւեամէին: Պրինց Յինի զօրքերը սկզբում կուռւմ էին «Մեծ բռնուցքը» դէմ: Իւնչուի ընթացքը երկիւստ էր, նրա զօրքերը պատերազմում էին դեսպանութիւնների դէմ:

ԲԵՐԼԻՆ: Պաշտօնական հաղորդագրութիւնից երեւում է, որ թաղաւորական զոյգի ձախարհորդութիւնը դէպի երկրի ներքը յետաձգված է, որովհետեւ թագուհին յղի է:

Վիէնայի սերբիական դեսպանը արձակված է:

28 օգոստոսի

ՎԱՇԻՆԳՏՈՆ: Գինեւրա Զաֆֆի հրաման ընդունեց պատրաստել ամերիկական զօրքերը

Պեկինից հեռանալու համար: Ամերիկական իշխանութիւնները հօգ տարան փոխադրող նաւեր պատրաստել դէպի Տակու՝ զօրքերը Ֆիլիպին կղզիները տեղափոխելու համար. հրամանները, սակայն, միմիայն նախապատրաստող բնաւորութիւն են կրում:

ԲԵՐԼԻՆ: Նաւոնիան տեղեկութիւնների համեմատ, Պեկինից, օգոստոսի 8-ից հեռագրում են, որ Իւնչու, Պեկինից մօտ պարտութիւն կրելուց յետոյ, անձնապաշտութիւն գործեց ինքն եւ կոտորեց իր ընտանիքը. նոյն բանն արեց իբր թէ եւ խիւստու, այն ինչ Լիւիլիւն սպանեց Դուչիօնի մօտ եղած կուի մէջ: Պրինց Տուանի տեղը յայտնի չէ: Հաստատված է, որ կայսրը գտնվում է Սիւան-խուօֆուում, դէպի հիւսիս-արեւմուտք Պեկինից: Դաշնակիցները օգոստոսի 16-ին պահակներ ուղարկեցին դէպի հիւսիս եւ դէպի հարաւ եւ նրանք հաղորդում են, թէ ամեն ինչ հանգիստ է:

Պրինց Յինին սպասում էին Յինուէում, Պեկինից դէպի հիւսիս. եսպանական դաշակախումբը պէտք է բերէր նրան Պեկին: Զինական միջնատրները դիտարկութիւն ունեն ոչ պաշտօնական այցելութիւն գործել զիլլաօմաթիական ներկայացուցիչներին: Պեկինի բնակիչներին, ըստ երեւոյթին, սով է սպանում, այդ պատճառով եսպանացիները նրանց բրինձ են բաժանում մեծ քանակութեամբ:

ՇԱՆԳՀԱՅ: Պատուով մի շարք ուշացած տեղեկութիւններ են ստացվում միաժամանակ հեռագրական լուրերի հետ Տօկիօյից: Տօկիօի հեռագրատանը հաւաքվել են հինգ օրվայ պետական հեռագիրներ, ուստի եւ միւս հեռագիրները յետաձգվում են: Պեկինից ստացված տեղեկութիւններին նախելով պրինց Յինի քաղաքապետը բանակցութիւններ է վարում եսպանական դեսպանի հետ, որպէս զիլլաօմաթիական մարմին աւաղ անդամի հետ: Օգոստոսի 11-ին, մեծ ցնդօրը, մեծ քաղաքապետը եւ ցունդ-լիւեամէին անդամներից մէկը բանակցութիւններ էին վարում Մակուսալիի հետ: Այդ բանակցութիւնների հետեւեալ կը լինի այն, որ պրինց Յին օգոստոսի 21-ին կը գալ Պեկին: Այս այցելութիւնը համարվում է որպէս նախաքան խաղաղութեան բանակցութիւնների:

ԲԵՐԼԻՆ: Նաւոնիան աղբիւրից հաղորդում են օգոստոսի 26-ին, թէ եսպանական հեծեալները հասան միջնա Յինի եւ ուղեկցեցին պրինց Յինին դէպի մայրաքաղաք: Որովհետեւ եսպանական զօրքերը դրաւն են քաղաքի այն մասը, որտեղ գտնվում է նրա պալատը, ուստի եւ պրինց Յին նրանց հակողութեան տակ կը լինի: Միւս պրինցների ընտելութեան տեղերը նոյնպէս դաշնակից զօրքերի պաշտպանութեան տակ են: Ի նկատ առնելով երբեք դրութեան լրջութիւնը՝ կայսրը հրամայեց պրինց Յինին անյապաղ դաւ մայրաքաղաքը դժուարութիւնները բանալու համար:

ՇԱՆԳՀԱՅ: Լիւ-Սոնգ-Չանգ յայտնեց, որ չէ կարող ուղեւորվել դէպի հիւսիս տան օրից առաջ, թէպէտ եւ նրա ուղեւորութեան համար նաւը պատրաստ է:

ՎԵՐԼԻՆԻՆԻՆԻՍԿ: Օգոստոսի 24-ի գիշերը Միսօլոյի մօտ զինւորական գնացքը բերկրեց դուրս ընկաւ: 21 վազօն ջարդված են. վերաւորված են 9 մարդ, սպանված երկու ձի:

ԼՕՆԴՈՆ: Համիլտօն վուլվը Համպտօնում ճառ արտասանեց, որի մէջ յայտնեց, թէ բոլոր պետութիւնները հակառակ են Զինատանի բաժանման եւ նրանից երկրորդ զօրքերին: Նրանք բաւարարութիւն կը պահանջեն կատարած ոճիւրների համար եւ երաշխաւորութիւն, որ այդպիսի դէպքեր այլ եւս չեն կրկնվի:

ՊԱՐԻՉ: Պրինց ուղարկել է Դէլիասէյին Պեկինից հետեւեալ հեռագիրը. «Երաշխաւորական մարմինը, միջազգային զօրքերի մի զօրաւթին ուղեկցութեամբ, մտաւ կայսերական պալատը. դեսպաններին դիմաւորեցին պաշտօնատար անձինք, որոնց մէջ էին մի քանի միջնատրներ եւ ցունդ-լիւեամէին անդամներ: Ամեն ինչ լաւ անցաւ: Երբ մենք դուրս եկանք՝ դուները փակվեցին: Միջազգային զօրքերը վերադարձան դէպի իրանց զօրաւթինները: Կայսերական ընտանիքի ոչ մի անդամ չը կալ Պեկինում:

ՎԱՇԻՆԳՏՈՆ: Մալիկինէյ պաշտօնապէս ընդունեց Միացեալ-Նաանցների նախագահի թեկնածութիւնը հանրապետական կուսակցութեան կողմից:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Երկրաբանութեան միջնատրը ճանապարհ ընկաւ Նովորոսիսկ:

Խաղաղութիւնը ԱՆԻՔՍԱՆԴՐ ՔԱՆԱԹԱՐ Հրատարակչներ: ԹԱԳՈՒՆԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ ԻՍԱԼԱՅԱ ՄԷԼԻԳ-ԱՂԱՄԱՆԱՆ

